

ՎԱՅԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
(ծննդյան 90 -ամյակի առթիվ)



Վաչե Սմբատի Նալբանդյանը ծնվել է 1919 թ. փետրվարի 25-ին Նոր Բայազետ (այժմ՝ Գավառ) քաղաքում: 1936 թ. ավարտելով Նոր Բայազետի միջնակարգ դպրոցը՝ աշխատում է ծննդավայրի մանկատանը (1936-1937 թթ.)՝ որպես դաստիարակ-դասատու: Այնուհետև ընդունվում է Երևանի պետական համալսարան, որի բանասիրական ֆակուլտետը գերազանցության դիպլոմով ավարտում է 1941 թ.:

Թելավիի զինվորական ուսումնարանն ավարտած երիտասարդը 1941 թ. ամռանը զորակոչվում է բանակ՝ Հյուսիսային Կովկաս: Ռազմաճակատում վիրավորվում է, ապաքինվելուց հետո շարունակում է ծառայությունը: Վ. Նալբանդյանի զինվորական ծառայությունները բարձր են գնահատվել. պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար», «Կովկասի պաշտպանության համար» և մի շարք այլ մեդալներով:

1985 թ. գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 40-ամյակի առթիվ պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով և հոբելյանական մեդալով:

1946 թ. գորացրվում է բանակից և շարունակում ուսումնառությունը Երևանի համալսարանի ասպիրանտուրայում՝ «Հայ հին գրականության պատմություն» մասնագիտությամբ:

Չնայած 1946-1951, 1954-1956 թթ. կուսակցական աշխատանք է կատարում Երևանի շրջանային և քաղաքային կազմակերպություններում և ՀԿԿ կենտկոմում, բայց ներքին մղումը նրան ուղղորդում է դեպի գիտահետազոտական աշխատանքը: 1950-ական թվականներից նա մի շարք պատասխանատու պաշտոններ է վարում Հայաստանի Հանրապետության գիտական և մշակութային կարևորագույն կենտրոններում. 1952-1953 թթ. եղել է Մատենադարանի տնօրեն, 1956-1965 թթ.՝ Երևանի պետական համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1965-1977 թթ.՝ ՀՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն: 1969 թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1994 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 1978 թվականից մինչև կյանքի վերջը՝ 1998 թ., Վ. Նալբանդյանը ՀՀ ԳԱԱ նախագահությանն առընթեր Գրադարանային խորհրդի նախագահն էր և Հիմնարար գիտական գրադարանի տնօրենը: Լինելով հայ հին գրականության խորաքնին ուսումնասիրողներից մեկը՝ Վ. Նալբանդյանը իբրև հետազոտող, կարևորում էր մաշտոցյան դարի հայ դպրության մեծ խորհուրդը՝ ազգապահպանության, մշակութաբանական, ազգային-քաղաքական դրդապատճառների սթափ գիտակցումը և դրա գործնական կիրառումը՝ հանուն հայության գոյատևման:

«Հայ գրերի ստեղծումով նոր հորիզոններ բացվեցին ազգային ինքնություն մշակույթի հիմքերի ամրապնդման, նրա հետագա վերելքի համար: Գրագիտության տարածմանը զուգընթաց՝ Մեսրոպ Մաշտոցի, Մահակ Պարթևի, նրանց աշակերտների ու հետնորդների եռանդուն ջանքերով Հայաստանում ծավալվեց իր ժամանակի համար, իրոք, եզակի չափերի գրական շարժում: Դարի հրամայականը, հարկավ, հայալեզու գրականության ստեղծումն էր, որին վիճակված էր դառնալու զորավոր պատվար՝ ընդդեմ օտարի տիրապետության ու ձուլման քաղաքականության, ընդդեմ գալիք արհավիրքների», - գրում է Վ. Նալբանդյանը (Հայ հին գրականությունը 5-րդ դարում, էջ 12): Նա հայոց հին մատենագրության սկզբնավորման ու ձևավորման կարևոր առանձնահատկություններից է համարում նրա՝ թարգմանություններին զուգընթաց սկզբնավորումը: Ընդամենը մի քանի տասնամյակի տարբերությամբ միանգամից հրապարակվեցին ինքնություն գրականության առաջին նշանավոր հուշարձանները, մասնավորապես պատմագրության դասական ստեղծագործությունները:

Վ. Նալբանդյանը նվիրումով տրվելու էր հայ պատմագրության դասական ստեղծագործությունների ուսումնասիրությանը, որի արդյունք դարձան «Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը», Եղիշեին, Մովսես Խորենացուն, Փավստոս Բուզանդին, չորրորդ դարի հայ իրականությանը և Ստեփան Զորյանի պատմավեպերին նվիրված վերլուծությունները, Վարդանանց պատերազմին և Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի քննությունը և ուրիշ շատ գործեր:

Վ. Նալբանդյանի գրականագիտական աշխատանքների մի զգալի մասը վերաբերում է հայ միջնադարյան հեղինակներին: Նա հատկապես քննության նյութ է դարձրել երեք խոշոր մեծությունների՝ Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և Մայաթ-Նովայի ստեղծագործական ժառանգության հարցերը: Նարեկացուն և Մայաթ-Նովային նա անդրադառնում է հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակված առանձին մենագրական աշխատություններով (Մայաթ-Նովա, Ե., 1987, *Саят-Нова, Е., 1987*, Գրիգոր Նարեկացի, Ե., 1990, *Григор Нарекаци – великий поэт и мыслитель X в., Е., 1991*): Հատկապես պետք է նրշել, որ այս աշխատություններում Վ. Նալբանդյանը, հենվելով հիշյալ հեղինակների մասին առկա նախորդ հետազոտողների գիտական ձեռքբերումներին, բացահայտում է նոր շերտեր, որոնք արգասաբեր և ուղենշային արժեք ունեն ժամանակակից գրականագիտության համար:

Կարևոր են Վ. Նալբանդյանի այն գործերը, որոնք ուղղված են այլալեզու ընթերցողներին և տպագրվել են ռուսերեն: Այդպիսիք են Մոսկվայում 1984-1988 թթ. հրատարակված V-VIII դդ. հայ գրականությանը վերաբերող հատվածները, որոնք զետեղված են *“История всемирной литературы”* բազմահատորյակի I-V հատորներում: Հիշատակության է արժանի այն փաստը, որ Վ. Նալբանդյանի գրեթե բոլոր կարևոր աշխատությունները տպագրվել են թարգմանաբար՝ ռուսերեն, իսկ «Թբիլիսին հայ մատենագրության մեջ. սկզբից մինչև XVIII դարի վերջը» աղբյուրագիտական հարուստ տեղեկություններ արձանագրող գիրքը՝ նաև վրացերեն, «Հայ միջնադարյան գրականություն: Համառոտ պատմություն» (հեղ-կից՝ Վ. Ներսիսյան, Հ. Բախչինյան) աշխատությունը՝ ռուսերեն և ֆրանսերեն:

Վ. Նալբանդյանի աշխատությունների մասին հողվածներ և գրախոսականներ են գրել անվանի շատ գրականագետներ. Մ. Մկրյանը, Էդ. Ջրբաշյանը, Ա. Մադոյանը, Պ. Հակոբյանը, Ա. Շարուրյանը, Ս. Արևշատյանը և այլք, իսկ Բ. Արվելաձեն, Ե. Բաբունաշվիլին, Թ. Հակոբյանը բարձր են գնահատել «Թբիլիսին

հայ մատենագրության մեջ» աշխատությունը՝ հատկապես կարևորելով դրա աղբյուրագիտական-պատմական արժեքը:

Ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Վ. Նալբանդյանը գիտակազմակերպչական գործունեությանը զուգընթաց իր ուշադրության կենտրոնում է ունեցել գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործը, շնորհալի երիտասարդներին գրականագիտության մեջ ներգրավելու խնդիրը: Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ պաշտպանած շատ լավագույն մասնագետներ ներկայումս աշխատում են հանրապետության բուհերում և գիտահետազոտական հիմնարկներում:

Ամենաբարձր գնահատականի է արժանի ակադեմիկոս Նալբանդյանի՝ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում որպես տնօրենի գիտակազմակերպչական աշխատանքը: Նրա շնորհիվ ԳԱԱ գրադարանը դասվեց առաջին կարգի գիտական գրադարանների շարքում: Նրա տնօրինության քսան տարիների ընթացքում գրադարանի աշխատակազմը ձեռք բերեց լուրջ առաջընթաց՝ հիմք նախապատրաստելով XXI դարի պահանջներին համապատասխան գիտական բարձրակարգ և բարձրորակ սպասարկում իրականացնելու համար:

ՍԱՐԳՍՅԱՆ Մ. Վ.